ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-03

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 3 նիստի

07-ը հունիսի 2024թ.

Աժ 214 սենյակ, ժ.11:00

Ս.թ. հունիսի 7-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացում,
2. Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակի հաստատում: Մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակի և որոշման ներկայացում ԱԺ նախագահին:

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին չորսը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Սոնա Խալաֆյանը, Նինա Փիրումյանը, Արթուր Հովսեփյանը: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Օրակարգի 1-ին հարց	Ա. Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացման կանոնները: Ժամը 11:00-ին սկսվեց հավակնորդների հարցազրույցի փուլը՝ հետևյալ հաջորդականությամբ՝ Հրաչյա Աբրահամյան- ժ. 11:10-12:30, զեկուցող՝ Նինա Փիրումյան, Վաղարշ Աղաբեկյան-ժ.12:30-13:40, զեկուցող՝ Արթուր Հովսեփյան, Նարինե Ավետիսյան- ժ.13:40-14:50, զեկուցող՝ Արուսյակ Ջուլհակյան, Նվարդ Վարդանյան- ժ.14:50-16:30, զեկուցող՝ Սոնա Խալաֆյան:
Օրակարգի 2-րդ հարց	Խորհուրդը ամփոփելով արդյունքները որոշեց հաղթողներին և առաջարկեց խորհրդի անդամ Արուսյակ Ջուլհակյանին Խորհրդի որոշումը ներկայացնել Ազգային ժողովի նախագահին:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց մրցույթի հաղթողներ ճանաչել Վաղարշ Աղաբեկյանին և Նարինե Ավետիսյանին, հաստատեց մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը, ինչպես նաև որոշեց հանձնարարել Արուսյակ Ջուլհակյանին՝ թեկնածուներ ընտրելու մասին Խորհրդի որոշումը և*

	մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնել Ազգային ժողովի նախագահին:

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան